ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

07 հուլիսի 2023 թվականի թիվ 68-Ա

ք. Երևան

«ՎԻ ԷՄ ՏԵԼԵՊՐՈՋԵՔԹ» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԲՈՂՈՔԸ ՄԵՐԺԵԼՈՒ ԵՎ ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 22-Ի ԹԻՎ 44-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ԱՆՓՈՓՈԽ ԹՈՂՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հեռուստատեսության եւ ռադիոյի հանձնաժողովը, (այսուհետ՝ ***Հանձնաժողով***) ուսումնասիրելով «ՎԻ ԷՄ ՏԵԼԵՊՐՈՋԵՔԹ» ՍՊ ընկերության (այսուհետ՝ ***Բողոքաբեր***) կողմից 2023 թվականի հունիսի 26-ին Հանձնաժողով մուտքագրված վարչական բողոքը, ***պարզեց.***

Բողոքաբերը, Հանձնաժողովի 2023 թվականի մայիսի 22-ի «Հիբրիդ Սոլյուշնս» ՍՊ ընկերության (այսուհետ՝ ***Ցանցային օպերատոր***) նկատմամբ հարուցված վարչական վարույթը կարճելու մասին» թիվ 44-Ա որոշման (այսուհետ՝ ***Վարչական ակտ***) դեմ, ներկայացրել է վարչական բողոք:

Հանձնաժողով ներկայացված վարչական բողոքում Բողոքաբերը նշել է, որ.

> *«(...) Նշված իրավական դրույթի լույսի ներքո դիտարկելով սույն գործի փաստական հանգամանքները, պետք է եզրակացնել, որ Հանձնաժողովը բավարարվել է միայն տեղում դիտարկման արձանագրությունը եւ դատարանի որոշումը գնահատելով, իսկ Հիբրիդ Սոլյուշնս ՍՊ ընկերության վարքագիծը սկսած 01.01.2022թ.-ից մինչեւ դատարանի որոշման կայացման ամսաթիվը չի քննարկվել, չի համադրվել այն Ընկերության կողմից ներկայացված ապացույցի հետ, հետեւաբար չի գնահատվել Ընկերության կողմից Հանձնաժողովին ներկայացված համապատասխան կայքում տեղադրված հայտարարության արտատպվածքը:»:*

Հաշվի առնելով բողոքում տեղ գտած հետեւյալ միտքը՝ հարկ ենք համարում արձանագրել հետեւյալը: Նախ պետք է հասկանալ, թե Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը (այսուհետ՝ ***Քաղաքացիական դատարան***) թիվ ԵԴ/9430/02/22 գործով որոշում կայացնելու հիմքում ինչ հիմնավորումներ եւ դիրքորոշումներ է դրել: Այսպես, Քաղաքացիական դատարանը իր

որոշման հիմքում դրել է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի **<u>182-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետը</u>**՝ *«Առաջին ատյանի դատարանը դատավարության ցանկացած փուլում կարճում է գործի վարույթը, եթե՝ վեճն ըստ էության սպառվել է.»:*

Քաղաքացիական դատարանի որոշման *«1. Գործի դատավարական պատմությունը.»* բաժնում դատարանն արձանագրել է հետեւյալը.

«29.03.2023 թվականին հայցվորի ներկայացուցիչ՝ Սայադ Բադալյանի կողմից միջնորդություն է մուտքագրվել դատարան՝ գործի վարույթը կարճելու մասին, ըստ որի հայտնել է, որ սույն գործով հայցի հարուցմամբ Հայցվորը նպատակ էր հետապնդում կնքել «НТВ-Мир», «НТВ Сериал», «НТВ Право» եւ «НТВ Стиль» հեռուստաալիքների վերահեռարձակման հնարավորություն տվող եւ հավասար մրցակցային պայմաններ ապահովող պայմանագիր: Հայցվորը, մասնավորապես համաձայն չէր Պատասխանողի կողմից առաջարկվող բարձր գնի՝ ամսական 1.080.000 ՀՀ դրամի հետ եւ առաջարկում էր Պատասխանողին հեռուստաալիքների վերահեռարձակման իրավունքը տրամադրել ամսական 850 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամով:

Հայցվորը հեռուստաալիքների իրավատիրոջ՝ «Տելեկոմպանիա ՆՏՎ» բաժնետիրական ընկերության հետ 01.02.2023 թվականին կնքել է լիցենզային պայմանագիր եւ ներկայումս այդ հեռուստաալիքների վերահեռարձակումն իրականացնում է նշված պայմանագրի հիման վրա: Հայտնել է նաեւ, որ Հայցվորը «Տելեկոմպանիա ՆՏՎ» բաժնետիրական ընկերությունից հեռուստաալիքների վերահեռարձակման իրավունքը ձեռք է բերել հենց ամսական 850 ԱՄՆ դոլարով: Սույն հայցի հարուցմամբ Հայցվորի հետապնդած նպատակը ներկայումս իրացված է: Նման պայմաններում գտնում են, որ սույն վեճն ըստ էության սպառված է:»:

Փաստացի, Քաղաքացիական դատարանն արձանագրել է, որ դատավարության կողմերը եկել են վեճի լուծման երկուստեք ընդունելի տարբերակի և քանի որ կողմերը հասել են իրենց կողմից հետապնդված նպատակին, ուստի նրանց միջև վեճն ըստ էության սպառված է:

Հանձնաժողովը կարեւոր է համարում նաեւ անդրադառնալ հետեւյալին: Քաղաքացիական դատարանի 2022 թվականի մարտի 04-ի թիվ **<u>ԵԴ/9430/02/22</u>** քաղաքացիական գործով՝ հայցի ապահովման միջոցներ ձեռնարկելու մասին որոշման համաձայն՝ արգելվել է «ՎԻ ԷՄ ՏԵԼԵՊՐՈՋԵՔԹ» ՍՊ ընկերությանը եւ այլ անձանց կատարելու «ՀԻԲՐԻԴ ՍՈԼՅՈՒՇՆՍ» ՍՊ ընկերության կողմից վիճելի ծրագրերի (НТВ МИР», «НТВ СЕРИАЛ», «НТВ ПРАВО» եւ «НТВ СТИЛЬ» տեսալսողական ծրագրեր) հեռարձակման (վերահեռարձակման) իրավունքի դադարեցմանն ուղղված գործողություններ՝ շարունակելով «ՀԻԲՐԻԴ ՍՈԼՅՈՒՇՆՍ» ՍՊ ընկերությանն այդ իրավունքի տրամադրումն այն պայմաններով, որոնք գործել են մինչև 2022 թվականի հունվարի 01-ը:

Սույն գործով հայցի հարուցմամբ Բողոքաբերը նպատակ էր հետապնդել կնքելու «НТВ МИР», «НТВ СЕРИАЛ», «НТВ ПРАВО» եւ «НТВ СТИЛЬ» տեսալսողական ծրագրերի

վերահաղորդման հնարավորություն տվող եւ հավասար մրցակցային պայմաններ ապահովող պայմանագիր: Քանի որ 2023 թվականի փետրվարի 01-ին «Տելեկոմպանիա ՆՏՎ» բաժնետիրական ընկերության հետ արդեն իսկ կնքել է պայմանագիր եւ այդ տեսալսողական ծրագրերի հեռարձակումն իրականացնում է նշված պայմանագրի հիման վրա:

Հանձնաժողովը ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 73-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով՝ Բողոքաբերի կողմից Վարչական ակտի դեմ բերված վարչական բողոքն ընդունել է վարույթ, քանի որ վարչական բողոքը համապատասխանում է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 70-րդ և 71-րդ հոդվածների պահանջներին:

Հանձնաժողովը Բողոքաբերի վարչական բողոքի վերաբերյալ ծանուցել է ցանցային օպերատորին և հայտնել, որ այս հարցի վերաբերյալ կարող են ներկայացնել իրենց պարզաբանումները, բացատրությունները:

Վարչական բողոքի իրակացման ժամանակահատվածում ցանցային օպերատորը 04.07.2023 թվականի թիվ 31-ՀՄ/2023 գրությամբ ներկայացրել է հետևյալը.

«ՎԻ ԷՄ ՏԵԼԵՊՐՈՋԵՔԹ» ՍՊ ընկերության կողմից վիճարկվող ժամանակահատվածում նշված տեսալսողական ծրագրերը վերահաղորդվել են իրավատիրոջ համաձայնությամբ և դատարանի համապատասխան որոշման հիման վրա: Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 04.03.2022 թվականի որոշումը հայցի ապահովման միջոց ձեռնարկելու մասին և «Տելեկոմպանիս ՆՏՎ» ԲԸ գրությունը Հանձնաժողով ներկայացվել են և առկա են վարչական վարույթի գործում: Ուստի ներկայացրած վարչական բողոքը ակնհայտ անհիմն է և ենթակա է մերժման»:

<u>Հանձնաժողովի հիմնավորումները (պատճառաբանությունը) եւ եզրահանգումը.</u>

Այսպիսով, վարչական բողոքի բազմակողմանի, լրիվ եւ օբյեկտիվ քննության, ձեռք բերված լրացուցիչ ապացույցների ուսումնասիրության եւ գնահատման արդյունքում Հանձնաժողովն ամրագրում է հետևյալը.

1. հարուցված վարչական վարույթի շրջանակներում իրականացված տեղում դիտարկման արդյունքում՝ խնդրո առարկա հանդիսացող տեսալսողական ծրագրերը վերահաղորդվել են Ցանցային օպերատորի կողմից,
2. Ցանցային օպերատորը վերահաղորդել է «НТВ МИР», «НТВ СЕРИАЛ», «НТВ ПРАВО» և «НТВ СТИЛЬ» տեսալսողական ծրագրերը՝ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 2022 թվականի մարտի 04-ի՝ հայցի ապահովման միջոցներ ձեռնարկելու մասին որոշման (քաղաքացիական գործ թիվ ԵԴ/9430/02/22) հիման վրա, համաձայն որի՝ արգելվել է «ՎԻ ԷՄ ՏԵԼԵՊՐՈՋԵՔԹ» ՍՊ ընկերությանը և այլ անձանց կատարելու «ՀԻԲՐԻԴ ՍՈԼՅՈՒՇՆՍ» ՍՊ ընկերության կողմից վիճելի ծրագրերի (НТВ МИР», «НТВ СЕРИАЛ», «НТВ ПРАВО» և «НТВ СТИЛЬ» տեսալսողական ծրագրեր)

հեռարձակման (վերահեռարձակման) իրավունքի դադարեցմանն ուղղված գործողություններ,

3. Ցանցային օպերատորը 2022 թվականի փետրվարի 07-ին թիվ 06-ՀՍ/22 գրությամբ ներկայացրել է վերահաղորդվող տեսալսողական ծրագրերի ցանկը, որում վերոնշյալ ծրագրերը ներառված չեն,
4. Ցանցային օպերատորի կողմից 2022 թվականի մարտի 10-ի թիվ 18-ՀՍ/22 գրությամբ տեղեկացրել է վերահաղորդվող տեսալսողական ծրագրերի ցանկում տեղի ունեցած փոփոխություններ մասին, համաձայն ի թիվս այլնի ավելացել են «НТВ МИР», «НТВ СЕРИАЛ», «НТВ ПРАВО» և «НТВ СТИЛЬ» տեսալսողական ծրագրերը,
5. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը 2023 թվականի ապրիլի 10-ի որոշմամբ կարճվել է «ՀԻԲՐԻԴ ՍՈԼՅՈՒՇՆՍ» ՍՊ ընկերության ընդդեմ «ՎԻ ԷՄ ՏԵԼԵՊՐՈՋԵՔԹ» ՍՊ ընկերության՝ հեռուստաալիքների վերահեռարձակման իրավունքը խախտող գործողությունները կանխելու պահանջի մասին գործը՝ վեճն ըստ էության սպառվելու հիմքով, քանի որ ցանցային օպերատորը 2023 թվականի փետրվարի 01-ին «Տելեկոմպանիա ՆՏՎ» բաժնետիրական ընկերության հետ կնքել է պայմանագիր և ներկայումս այդ տեսալսողական ծրագրերի հեռարձակումն իրականացնում է նշված պայմանագրի հիման վրա:

Հանձնաժողովը որպես վարչական մարմին վարչարարությունն իրականացրել է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքով սահմանված կարգով և ապահովել է փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ բացահայտելով գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները («Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 37-րդ հոդված) և Հանձնաժողովի կողմից իրականացվել է իրավաչափ վարչարարություն, իսկ ընդունված Վարչական ակտը ընդունվել է Օրենքի դրույթների պահանջների պահպանմամբ և իրավաչափ է:

Հետևաբար, Հանձնաժողովի կողմից ընդունված իրավաչափ Վարչական ակտը չի կարող անվավեր ճանաչվել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված հիմքով:

Սակայն, Բողոքաբերի կողմից 2023 թվականի հունիսի 26-ին Վարչական ակտի դեմ բերված վարչական բողոքով կրկին ներկայացվել են դեռևս վարչական վարույթի շրջանակներում ներկայացված ապացույցները (Ռոստելեկոմի պաշտոնական կայքից արտատպվածքը), որոնք ըստ Բողոքաբերի վկայում են ցանցային օպերատորի կողմից կատարված իրավախախտման փաստը:

Այսպիսով, վարչական բողոքի նյութերի ուսումնասիրության և համադրման արդյունքում՝ առաջնորդվելով ինչպես գործում առկա, այնպես էլ լրացուցիչ ներկայացրած ապացույցներով, Հանձնաժողովն ամրագրում է, որ Հանձնաժողովը որպես տեսալսողական մեդիայի ոլորտը կարգավորող պետական մարմին Օրենքով վերապահված իր վերահսկողական լիազորություններն իրականացնում է մշտադիտարկում, իսկ ցանցային օպերատորի դեպքում՝ նաև տեղում դիտարկում իրականացնելու միջոցով: Տվյալ դեպքում,

Հանձնաժողովը ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի հոդվածի 1-ին մասի ա) կետով՝ վարչական վարույթը հարուցել է Բողոքաբերի դիմումը Հանձնաժողով ստանալու օրը՝ 2022 թվականի փետրվարի 11-ին և վարչարարության ընթացքում Օրենքի 42-րդ հոդվածով սահմանված դրույթներին համապատասխան իրականացրել է ցանցային օպերատորի գործունեության մշտադիտարկում՝ տեղում դիտարկում իրականացնելու միջոցով, որի արդյունքում էլ արձանագրել է, որ խնդրո առարկա հանդիսացող տեսալսողական ծրագիրը ցանցային օպերատորի կողմից վերահաղորդվում են Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 2022 թվականի մարտի 04-ի ՝հայցի ապահովման միջոցներ ձեռնարկելու մասին որոշման հիման վրա, որն էլ հիմք է հանդիսացել վարչական վարույթը կասեցնելու համար՝ 2022 թվականի մարտի 16-ին վարչական ակտի ընդունմամբ: Իսկ Հանձնաժողովի 2023 թվականի մայիսի 22-ի թիվ 44-Ա որոշման համաձայն «Հիբրիդ Սոլյուշնս» ՍՊ ընկերության նկատմամբ հարուցված վարչական վարույթը կարճվել է:

Սույն վարչական բողոքով Բողոքաբերի կողմից վարչական բողոքի շրջանակում լրացուցիչ ոչ մի ապացույց չի ներկայացվել, իսկ ցանցային օպերատորը իր ներկայացրած գրավոր բացատրությամբ հայտնել է այն մասին, որ *նշված տեսալսողական ծրագրերը վերահաղորդվել են դատարանի համապատասխան որոշման հիման վրա:*

Հանձնաժողովը վերլուծելով և գնահատելով սույն գործի հետ կապված փաստական հանգամանքները արձանագրում է, որ վարչական վարույթի իրականացման ժամանակահատվածում, ինչպես նաև վարչական բողոքի շրջանակներում ներկայացված նույն ապացույցներն են, որոնք ներկայացվել էին դեռևս վարչական վարույթի շրջանակներում, ուստի արձանագրում ենք, որ ցանցային օպերատորի կողմից Օրենքի խախտում թույլ չի տրվել:

Այսպիսով, հաշվի առնելով այն փաստը, որ Ցանցային օպերատորի կողմից տեսալսողական մեդիայի բնագավառը կարգավորող օրենսդրության խախտում չի իրականացվել, ուստի վարչական վարույթի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության, ձեռք բերված ապացույցների ուսումնասիրության և գնահատման արդյունքում Հանձնաժողովն արձանագրում է, որ վարչական իրավախախտման դեպքի կամ կազմի բացակայության հիմքով Բողոքաբերի կողմից ներկայացված վարչական բողոքը ենթակա է կարճման:

Այսպիսով, Հանձնաժողովի կողմից Օրենքով սահմանված ժամկետում իրականացված վարչարարության արդյունքում 2023 թվականի մայիսի 22-ին ընդունված թիվ 44-Ա վարչական ակտն իրավաչափ է եւ օրենքով սահմանված պահանջներին համապատասխան է ընդունվել, նշում է պարունակում այն բոլոր փաստական եւ իրավաբանական հանգամանքների վերաբերյալ, որոնք Հանձնաժողովին հիմք են տվել ընդունելու համապատասխան որոշումը:

<u>Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետի</u> համաձայն՝ Կարգավորող պետական մարմինը՝ իրականացնում է Հեռարձակողների եւ օպերատորների գործունեության մշտադիտարկում:

<u>Օրենքի 42-րդ հոդվածի 1-ին եւ 18-րդ մասերը</u> սահմանում են.

«1. Հեռարձակողների գործունեության մշտադիտարկումն իրականացվում է ուղղակի դիտարկման, իսկ օպերատորի դեպքում՝ նաեւ տեղում դիտարկում իրականացնելու միջոցով: Ուղղակի դիտարկման արդյունքները կարող են համադրվել տեսալսողական հաղորդումների հաշվառման էլեկտրոնային մատյանների տվյալներին:

18. Մշտադիտարկման արդյունքների վերաբերյալ արձանագրությունը կարող է հիմք հանդիսանալ վարչական վարույթ հարուցելու համար, իսկ հարուցված վարչական վարույթի շրջանակներում ծառայել որպես վարչական վարույթի ապացույց:»

<u>Օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասի</u> համաձայն՝ Հայաստանի Հանրապետության տարածքում եւ նրա սահմաններից դուրս գործող Հեռարձակողների տեսալսողական ծրագրերը ցանցային օպերատորի լիցենզիա ստացած անձի կողմից կարող են վերահաղորդվել տեսալսողական ծրագրերի դիստրիբյուտորի կամ հեռարձակողի հետ պայմանագրի հիման վրա:

<u>«Վարչարարության հիմունքների եւ վարչական վարույթի մասին» օրենքի 75-րդ հոդվածի 3-րդ մասի</u> համաձայն՝ վարչական մարմինը վարչական բողոքը քննարկելիս առաջնորդվում է ինչպես գործում առկա, այնպես էլ լրացուցիչ ներկայացվող ապացույցներով:

<u>«Վարչարարության հիմունքների եւ վարչական վարույթի մասին» օրենքի 76-րդ հոդվածի 1-ին մասի բ) կետի</u> համաձայն՝ քննարկելով վարչական ակտի վերաբերյալ բերված վարչական բողոքը՝ վարչական մարմինը, որն ընդունել է բողոքարկվող վարչական ակտը, իրավասու է՝

բ) մերժելու բողոքը՝ վարչական ակտը թողնելով անփոփոխ:

Ելնելով վերոգրյալից եւ ղեկավարվելով «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասի, 32-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետի, եւ հիմք ընդունելով «Վարչարարության հիմունքների եւ վարչական վարույթի մասին» օրենքի 75-րդ հոդվածի 3-րդ մասը, 76-րդ հոդվածի 1-ին մասի բ) կետը՝ Հեռուստատեսության եւ ռադիոյի հանձնաժողովը ***որոշեց.***

1. Մերժել «ՎԻ ԷՄ ՏԵԼԵՊՐՈՋԵՔԹ» ՍՊ ընկերության վարչական բողոքը՝ անփոփոխ թողնելով Հեռուստատեսության եւ ռադիոյի հանձնաժողովի 2023 թվականի մայիսի 22-ի թիվ 44-Ա որոշումը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն վարչական վարույթի մասնակիցներին պատշաճ ձեւով հանձնելու օրվան հաջորդող օրվանից:
3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Տ. ՀԱԿՈԲՅԱՆ

07 հուլիսի 2022թ.
ք. Երևան